

ՄԻՋՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՌԻՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԱՆԳՆԵՐԵՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՈՒՄ

Անահիտ Ռսկանյան

Երևանի պետական համալսարան

Հոդվածում հիմնավորվում է միջմշակութային հաղորդակցության ուսուցման մեթոդական համակարգի արդյունավետությունը անգլերեն իրավական կողմնորոշման դասընթացում: Ներկայացվում են անգլերենի իրավական ենթալեզվի ուսուցման մանկավարժական պայմանները, առաջարկվող կադապարը, ուսանողների խոսքային կարողությունների գնահատման չափանիշները, ինչպես նաև փորձարարական ուսուցման արդյունքները համեմատական կտրվածքով:

Բանալի բառեր. միջմշակութային հաղորդակցություն, կադապար, մեթոդական համակարգ, նախադեպային տեքստ, հարալեզվական միջոցներ, խոսութային վերլուծություն, իրավական ենթալեզու, իրավական մշակույթ, ընկալողական-արտադրողական վարժություն:

Ներածություն

Ապագա իրավաբաններն անգլերեն իրավական բնույթի տեքստեր ընթերցելիս, թարգմանելիս, դրանց բովանդակությունը վերարտադրելիս լուրջ դժվարությունների են հանդիպում: Ուսուցողական նպատակներով իրավաբանական տեքստի հետ աշխատանքը ենթադրում է նախ և առաջ լեզվաբանական բնույթի դժվարությունների հաղթահարում: Սակայն, հանրալեզվաբանական, հանրամշակութային բնույթի դժվարությունները երբեմն գումարվում են մասնագիտական բնույթի խնդիրներին:

Ապագա իրավաբանների անգլերեն ուսումնասիրելու հիմնական նպատակն է հասնել այնպիսի մակարդակի, որ կարողանան մասնակցել միջմշակութային հաղորդակցությանը մասնագիտական գործունեության ակադեմիական միջավայրում:

Ինչպես հայտնի է, միջմշակութային իրազեկությունը զարգանում է երկու և ավելի լեզուների, ինչպես նաև թիրախային մշակույթների ուսումնասիրությամբ (Լեզուների իմացության/իրազեկության համաեվրոպական համակարգ, 2005:120-123):

Հայալեզու ուսանողները պետք է կարողանան ներկայացնել իրենց մշակույթը ընդհանրապես և մասնավորապես՝ Հայաստանի իրավական մշակույթը, համեմատել հայրենական իրավական իրողությունները, հասկացությունները, իրականությունները անգլալեզու իրավական իրականությունների հետ:

Ընդհանուր առմամբ, ապագա իրավաբանները պետք է նպատակադիրքորոշվեն իրենց խոսքային կարողությունները շարունակաբար կատարելագործելու գործում: Նրանք պետք է գիտակցեն, որ ցՏկյանս կրթության նպատակ պետք է դառնա անգլալեզու իրավաբանների ժեստերի, մարմնի լեզվի, հանդերձանքի, դատական ոլորտի կառույցների, շինությունների, հայտնի դատա-

վորների, դատախազների, փաստաբանների, ինչպես նաև հանցագործների անունների, անձնանունների, հայտնի իրավական պատմությունների, պատմվածքների, անեկդոտների (իրավական), դետեկտիվ գրականության, ինչպես նաև ֆիլմերի ուսումնասիրությունը:

Մշակելով անգլերեն իրավական ենթալեզվի միջոցով միջմշակությամբ հաղորդակցության ուսուցման կադապարը՝ մենք հաշվի ենք առել հայալեզու և անգլալեզու իրավաբանների խոսքային, ոչ խոսքային, վարքագծային, հանրամշակությամբ, մասնագիտական առանձնահատկությունները, միջմշակությամբ հաղորդակցության բովանդակությունը՝ անձնական և մասնագիտական շփման մակարդակներում:

Միջմշակությամբ հաղորդակցության ուսուցման կադապարի արդյունավետության փորձարարական հիմնավորումը

Փորձարարական ուսուցման նախնական փուլում իրականացվել է ստուգողական և փորձարարական խմբերում ներգրավված ուսանողների լեզվական մակարդակի, ճանաչողական պահանջմունքների վերլուծություն, նրանց միջմշակությամբ հաղորդակցության կարողությունների ստուգման և գնահատման չափանիշների հստակեցում: Փորձարարական աշխատանքին մասնակցել են 112 ուսանող: Ուսանողների միջմշակությամբ իրազեկության կարողությունների մակարդակը պարզելու համար կազմվել է հարցաթերթիկ: Հարցմանը մասնակցել են ԵՊՀ - իրավաբանական ֆակուլտետի առաջին և երկրորդ կուրսի 97 ուսանող:

Փորձարկվել է անգլերեն իրավական ենթալեզվի միջոցով միջմշակությամբ հաղորդակցության կարողությունների ձևավորման կադապարը: Այդ նպատակով ընտրվել են մասնագիտական և գեղարվեստական տեքստեր, մշակվել է համապատասխան վարժությունների համակարգ:

Ձևավորող գիտափորձն անցկացվել է ընտրված ստուգողական և փորձարարական խմբերի հիման վրա:

Ձևավորող գիտափորձի ընթացքում իրականացվել է դեպքի վերլուծություն (case study), երբ մոդելավորվում են փաստագրված, իրական իրադրություններ, որոնց բնորոշ դեպքերը հիմք են ծառայում քննարկումների համար (Lee, Hall & Barone 2007:25):

Ինչպես հայտնի է, դատական դեպքերը, նախադեպերը հանդես են գալիս որպես իրավական իրակություններ, օրինակ՝ Wilson v. Arkansas, knock and announce, a blanket exception, case-by-case exception, Hudson v. Michigan, exclusionary rule, Richards v. Wisconsin, no-knock warrant իրավական իրակությունները կարելի է ներմուծել տարբեր համացանցային տեքստերի և գերտեքստերի միջոցով:

Դեպքի վերլուծության ընթացքում ուսանողները կիրառում են ստացված գիտելիքները, վերլուծում են փաստերը, եզրահանգումներ անում:

Փորձարարական աշխատանքի ձևավորող փուլում արդյունավետ են գործարարական և խաղային մեթոդների կիրառումը, աշխատանքը իրավաբանական փաստաթղթերի հետ:

Միջմշակությամբ հաղորդակցության ուսուցման տեսանկյունից կարևոր է, որ տվյալ դասընթացի խնդիրների համատեքստում ուսանողները յուրացնեն անգլալեզու իրավական հարալեզվական միջոցները, իրավական, դատական, խորհրդանիշները, ճարտասանական խոսքի հնարները, իրավական եզրույթներ:

րը, իրակությունները, իրավական նախադեպերը, ինչպես նաև դեպքերի կամ գործերի ուսումնասիրության տեխնոլոգիաները:

Ինչպես նշում է Դ.Բ. Գուդկովը. «Նախադեպային տեքստը լավ հայտնի է լեզվամշակութային հանրության ամեն մի միջին անդամի, որի ճանաչողական բազայի մեջ է մտնում նրա ընկալման անփոփոխակը: Դրան դիմում են բազմիցս հաղորդակցության ընթացքում տեքստին առնչվող արտահայտությունների կամ խորհրդանիշերի միջոցով, որոնք համարվում են նախադեպային երևույթներ» (Гудков 1997:106-118; Дубовицкая 2012:15-20):

Միջմշակութային իրավական ենթալեզվի փորձարարական ուսուցման արդյունքները

Փորձարարական և ստուգողական խմբերի ցույց տված արդյունքների համեմատությունը հաստատում է առաջարկվող մեթոդական համակարգի արդյունավետությունը: Ըստ այդմ, փորձարարական խմբի ուսանողները փորձարարական աշխատանքի սկզբում նույն մակարդակում են ճանաչում անգլալեզու իրավական եզրույթները, սակայն գիտափորձի վերջում նրանք գերազանցում են ստուգողական խմբի ուսանողներին 3 միավորով:

Անգլալեզու իրավական իրակությունները ճանաչելու կարողությունը գիտափորձի սկզբում երկու խմբում էլ թույլ է զարգացած, քանի որ «իրակություն» հասկացությունը հիմնականում դասախոսների կողմից չի էլ մեկնաբանվում: Նշված հասկացությունների յուրացմանը նպաստում են ոչ միայն անգլերենի, այլև իրավաբանության ոլորտին վերաբերող դասընթացները: Ակնհայտ է, որ իրավական իրակությունները, տերմին-իրակությունները իրավաբանները յուրացնում են իրենց ամբողջ կյանքի և աշխատանքային գործունեության ընթացքում:

Ինչ վերաբերում է տարբեր իրական համարվող իրադրություններում իրավական իրակությունները կիրառելու կարողությանը, ապա այն ձևավորվում է նախ և առաջ ապագա իրավաբանների գործնական աշխատանքի ընթացքում: Այստեղ խոսք է գնում ուսումնական պայմաններում դրանց կիրառման մասին: Պատահական չէ, որ փորձարարական խմբում այդ կարողությունն ավելի արագ է զարգանում, քանի որ նրանք նախօրոք ծանոթանում են իրավական իրակությունների յուրացման առանձնահատկություններին ուսումնական պայմաններում և աշխատանքային իրադրություններում:

Ակնհայտ է, որ հարալեզվական միջոցները հասկանալու և գործածելու կարողությունը կարող է զարգանալ, եթե համապատասխան տեքստեր են առաջարկվում, և ուսանողները կատարում են համապատասխան վարժություններ: Վերլուծված դասագրքերում այդպիսի վարժություններ չեն հայտնաբերվել: Արդյունավետ են հատկապես ուսուցողական նպատակներով ֆիլմերի ցուցադրումը: Համապատասխան ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ՀՀ-ում այդ ուղղությամբ հետևողական աշխատանքներ չեն իրականացվում:

Իրավական ոլորտում կիրառվող «մարմնի լեզվի» համեմատելու և գործածելու վարժությունները արդյունավետ են մի քանի պատճառով¹: Դրանք հետաքրքիր են, կառուցողական, զարգացնում են ուսանողների քննադատական, ստեղծագործական մտածողությունը:

Գրավոր և բանավոր խոսքում կապակցական բառերը և արտահայտությունները կիրառելու կարողությունները հիմնականում զարգանում են ոչ բավա-

րար ռեֆլեքսիվ մակարդակում: Այստեղ նույնպես արդյունավետ է, երբ ուսանողները ինքնուրույն փնտրում, գտնում են նշված բառերն ու արտահայտությունները:

Իրավական իրողությունները, գործերը, դեպքերը, իրակությունները ըստ մշակութային ենթատեքստի համեմատելու կարողությունը պահանջում է ավելի շատ մասնագիտական և հենքային գիտելիքներ: Նույնը վերաբերում է դատաիրավական նախադեպերը ըստ մշակութային ենթատեքստի մեկնաբանելուն: Փորձարարական խմբի ցույց տված արդյունքները բարձր են նախ և առաջ այն պատճառով, որ ուսանողները համադրում են մասնագիտական և լեզվական գիտելիքները:

Ինչ վերաբերում է գեղարվեստական, դետեկտիվ տեքստերն ըստ իրավական մշակույթի ենթատեքստի վերլուծելուն, ապա ավանդական համարվող դասընթացներում խոսութային վերլուծություն կատարվում է ներըմբռնողաբար, ոչ գիտական մակարդակում²: Հատկանշական է այն, որ իրավաբաններն իրենց մասնագիտական գործունեության ընթացքում ստիպված են յուրացնել խոսութային վերլուծության տարրերը, երբ հաշվի են առնում գործերի մեջ ներգրավված անձանց տարիքը, դիրքը, սոցիալական կարգավիճակը և այլն: Սա այն դեպքն է, երբ լեզվաբանական վերլուծությունը դառնում է մասնագիտական գործունեության կարևոր բաղադրիչ: Խնդիրն այն է, թե դա ինչպես անել անգլերեն լեզվով:

Նույնը վերաբերում է գեղարվեստական ֆիլմերն ըստ իրավական մշակույթի ենթատեքստի վերլուծելուն: Այստեղ նույնպես տվյալ կարողության ձևավորման համակարգված մոտեցումը տալիս է ցանկալի արդյունք:

Ընդհանուր արդյունքների համեմատությունը, որն իրականացվել է Microsoft Excel 2010 ծրագրով, ցույց է տալիս, որ փորձարարական խումբն առաջադիմել է 24%, իսկ ստուգողական խումբը՝ 14%: Գիտափորձի տվյալների հավաստիությունը և հուսալիությունը հաստատվում է ստացված արդյունքների համեմատությամբ և ամփոփմամբ: Տվյալների մշակումն իրականացվել է նշված ծրագրով:

Ըստ այդմ, մշակվել են ուսանողների նշված կարողությունների գնահատման չափանիշները, հաշվի առնելով ուսանողներին անհրաժեշտ հետևյալ կարողությունները՝

1. ընտրված հաղորդակցական ոճի ընտրության,
2. վերլուծվող իրավական հասկացույթի մեկնաբանման,
3. խոսքային վարվեցողության կանոնների կիրառման,
4. հաղորդակցման ռազմավարության ընտրության,
5. տարբեր իրավական թեմաներով բանավիճելու,
6. իրավական ենթամշակույթների համեմատության,
7. խոսքարկող կամ ֆատիկ հաղորդակցության,
8. խոսքի մեջ ոճական հնարների կիրառման,
9. անգլերեն իրավական ենթալեզվով դեպքերի ուսումնասիրության,
10. խոսութային վերլուծության:

Համապատասխան չափանիշների գնահատումը ցույց տվեց, որ նշված կարողությունները կարող են ձևավորվել և զարգանալ այն դեպքում, երբ թե՛ դասագրքերի, ուսումնական ձեռնարկների հեղինակները, թե՛ դասավանդող դասախոսները տիրապետեն որոշակի մեթոդական զինանոցի, քանի որ միայն

շրջանառվող դասագրքերով աշխատանքը չի կարող տալ ցանկալի արդյունք:

Ակնհայտ է, որ ուսանողներն առանց դասախոսի օգնության չեն կարող ընտրել ուսումնական պայմաններում այս կամ այն հաղորդակցական ոճը, հատկապես մասնագիտական շփման մակարդակում: Նույնը վերաբերում է վերլուծվող իրավական հասկացույթի մեկնաբանմանը, քանի որ դա որոշակի կրթական մշակույթի առկայության պարագայում է հնարավոր:

Ինչ վերաբերում է խոսքային վարվեցողության կանոնների կիրառմանը, ապա համարյա բոլոր ավանդական և ժամանակակից անգլերենի ուսուցման դասընթացներում այդ խնդիրը հաշվի է առնվում, սակայն այստեղ խոսք է գնում կոնկրետ իրավաբանների խոսքային վարվեցողության կանոնների մասին:

Պարզ է, որ միայն լեզվական բարձր մակարդակ ունեցող ուսանողները կարող են մտածել հաղորդակցման ռազմավարության ընտրության մասին, չնայած նրանք դա միշտ անում են ներըմբռնողաբար:

Թվում է, թե տարբեր իրավական թեմաներով բանավիճելու կարողությունը փորձում են զարգացնել թե՛ հայրենական, թե՛ արտերկրի ժամանակակից մեթոդիստները: Սակայն, խնդիրը մնում է նույնը, առ այն, որ ուսուցման միայն բավարար լսարանային ժամաքանակ ապահովելով և ունենալով ուսանողների բարձր լեզվական մակարդակ ունեցող լսարան, հնարավոր է հասնել ցանկալի արդյունքի:

Իրավական ենթամշակույթները համեմատելու համար ուսանողները պետք է ունենան խորը մասնագիտական, հենքային և լեզվական գիտելիքներ: Այստեղ առանցքային նշանակություն ունի նաև միջմշակութային հաղորդակցման կարողությունները:

Ընդհանուր առմամբ, խոսքարկող հաղորդակցության բաղադրիչների ուսուցումը համապատասխան վերաբերմունքի չի արժանանում: Փորձարարական աշխատանքը ցույց տվեց, որ ըստ դասանյութի ուսուցանելով գործաբանական կամ խոսութային նշույթներ, ուսանողները ավելի արագ են կողմնորոշվում տարբեր հաղորդակցական իրադրություններում:

Մի բան է մայրենի լեզվով խոսքի մեջ ոճական հնարներ կիրառել, մեկ ուրիշ խնդիր է, երբ ուսանողները փորձում են դա անել օտար լեզվով: Այս պարագայում նույնպես արդյունավետ մեթոդ է ուսանողների ուշադրությունը իրավիճակի ճարտասանական, ոճական հնարների կիրառման վրա: Միայն նպատակադիրքորոշման մակարդակում, նրանք հասնում են շոշափելի արդյունքների:

Անգլերեն իրավական ենթալեզվով դեպքերի ուսումնասիրությունը նպաստում է ուսանողների ոչ միայն լեզվական, այլև մասնագիտական կարողությունների ձևավորմանը և զարգացմանը: Նույնը վերաբերում է խոսութային վերլուծությանը, որը կարող է լինել ավելի արդյունավետ, երբ ձևավորվում է միջառարկայական կապերի ապահովման, ներառական դասերի կազմակերպման մակարդակում:

Այսպիսով փորձարարական խմբում ուսանողների առաջադիմությունը կազմում է 34%, իսկ ստուգողական խմբում՝ 14%:

Եզրակացություն

Առաջարկվող անգլերեն իրավական ենթալեզվի միջոցով միջմշակութային հաղորդակցության ուսուցման կադապարը ենթադրում է բացահայտել անգլալեզու իրավաբանների խոսքային, ոչ խոսքային, վարքագծային, հանրամշակու-

թային, մասնագիտական առանձնահատկությունները կենցաղային և մասնագիտական մակարդակներում:

Փորձարարական աշխատանքի արդյունքները հաստատում են այն մտահանգումը, ըստ որի՝ իրավական անգլերենի դասընթացները կազմակերպելիս, դասախոսները համապատասխան ուշադրություն չեն դարձնում միջմշակութային հաղորդակցության հմտությունների զարգացման վրա, հաշվի չեն առնում այն փաստը, որ հայալեզու ուսանողները հաղթահարում են մշակութային փոխներթափանցումն ընդհանրապես, և տվյալ մասնագիտական շփման մակարդակում՝ մասնավորապես:

ՇԱՆՈՒԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ֆրանսիացի քրեագետ Ալֆոնս Բերտիոյին է պատկանում մարդու ինքնությունը հաստատելու համակարգի ստեղծումը՝ հիմնված մարդու մարմնի՝ գլխի, վերջույթների չափսերի վրա: Վերջինս կոչվում է «Բերտիոն համակարգ», որը լայն կիրառություն ունեցավ մինչև 20-րդ դարի սկիզբը, այնուհետև տեղի տվեց մատնահետքերի գյուտին:
2. Ավանդական համարվող դասընթացներում խոսութային վերլուծություն կատարվում է ներդրմաբեռնաբար, ոչ գիտական մակարդակում: Հատկանշական է այն, որ իրավաբանները իրենց մասնագիտական գործունեության ընթացքում ստիպված են յուրացնել խոսութային վերլուծության տարրերը, երբ հաշվի են առնում գործերի մեջ ներգրավված անձանց տարիքը, դիրքը, սոցիալական կարգավիճակը և այլն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. (2005) *Լեզուների իմացության/իրազեկության համաեվրոպական համակարգ. ուսումնառություն, դասավանդում, գնահատում: / Ծրագրի ղեկավար՝ Ս. Ջոլյան, Թարգմ.՝ Ս. Կարախանյան և ուրիշ., Խմբ.՝ Ս. Ջոլյան, Մ. Աստվածատրյան և ուրիշ. Եր.: «Նորք» գրատուն:*
2. Гудков, Д.Б. и др. (1997) *Некоторые особенности функционирования прецедентных высказываний.* / Гудков Д.Б., Красных В.В., Захаренко И.В., Багаева Д.В. // Вестник Московского университета. Сер. 9. Филология, № 4.
3. Дубовицкая, Л.В. (2012) *Функции прецедентности иконических компонентов креолизованных текстов.* // Вестник МГОУ, Серия “Лингвистика”, № 2.
4. Lee, D.S.; Hall, C., & Barone, S. (2007) *American Legal English: Using Language in Legal Contexts.* 2nd ed. Ann Arbor: University of Michigan Press.

Методическая система обучения межкультурной коммуникации в юридически ориентированном курсе английского языка

В статье обосновывается эффективность методической системы обучения межкультурной коммуникации в юридически ориентированном курсе английского языка. Представлены педагогические условия обучения юридическому подязыку английского языка, разработанная модель, критерии оценки речевых умений студентов, а также результаты опытного обучения в сравнительном срезе.

Methodological System of Teaching Intercultural Communication in Law English Course

The article substantiates the effectiveness of the methodological system of teaching intercultural communication in the Law English course.

It represents the pedagogical conditions of teaching the Law English sublanguage, the developed model, criteria of assessing students' proficiency as well as the results of experimental teaching in a comparative cut.